

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 08

**«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի**

**գիտական խորհրդի 26.12.2019թ. նիստի**

Գիտական խորհրդի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 40 (քառասուն) անդամից, 30-ը (երեսուն),

Նիստին մասնակցում էին՝

1. Մերոբյան Երվանդ Գիտական խորհրդի նախագահ, ռեկտորի ԺՊ
2. Ավետիսյան Նազելի Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ
3. Նիկողոսյան Գագիկ ՇՊՀ պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ
4. Մելքոնյան Հովիկ Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն
5. Սարգսյան Արմենուհի Գիտական քաղաքականության, որակի ապահովման ու կառավարման կենտրոնի տնօրեն
6. Խաչատրյան Թերեզա Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և ՏՏ կենտրոնի տնօրեն
7. Պետրոսյան Կարինե Գիտական քարտուղար (գիտական խորհրդի քարտուղար)
8. Մելիքյան Թամարա Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի ղեկան
9. Մարդոյան Ռուզաննա Մանկավարժության ֆակուլտետի ղեկան
10. Մկրտչյան Արթուր Ռազմական ամբիոնի պետ
11. Այվազյան Կարինե ՇՊՀ քոլեջի տնօրեն

- |     |                        |  |
|-----|------------------------|--|
| 12. | Դարբինյան Կարեն        | ՇՊՀ ավագ դպրոցի տնօրեն   |
| 13. | Խաչատրյան Վալերի       | ՇՊՀ արհմիության նախագահ  |
| 14. | Սողոյան Սպարտակ        | Մ.գ.դ, պրոֆեսոր, ( անենաերիտասարդ դոկտոր)  |
| 15. | Մկոյան Արտաշես         | Մ.գ.դ, պրոֆեսոր, ( անենատարեց դոկտոր)  |
| 16. | Սարգսյան Սամվել        | ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր         |
| 17. | Մարտիրոսյան Լևոն       | Աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնի վարիչ, աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ                             |
| 18. | Մկրտչյան Արթուր        | Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի գործարարության և վարչարարության ամբիոնի վարիչի ԺՊ, տնտ.գ.թ., դոցենտ                                |
| 19. | Ղուկասյան Լուսիկ       | Մանկավարժության ֆակուլտետի մանկավարժության ամբիոնի վարիչի ԺՊ, մ.գ.թ., դոցենտ   |
| 20. | Աղանյան Գևորգ          | Մանկավարժության ֆակուլտետի ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոնի վարիչի ԺՊ, մ.գ.թ.,                             |
| 21. | Հովհաննիսյան Արտակ     | Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի իրավագիտության և քաղաքագիտության ամբիոնի վարիչի ԺՊ, պ.գ.թ., դոցենտ                |
| 22. | Հովհաննիսյան<br>Անահիտ | Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր             |
| 23. | Հայրապետյան Սերգո      | Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ, բան. գիտ. դոկտոր                         |
| 24. | Կուրազյան Օֆելյա       | Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի արվեստի ամբիոնի վարիչի ԺՊ, բ.գ.թ., ասիստենտ   |
| 25. | Տեր-Աղամյան Շուշան     | Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի միջմշակութային հաղորդակցության և զբոսաշրջության ամբիոնի վարիչի ԺՊ, բ.գ.թ., ասիստենտ |

- |     |                          |  |
|-----|--------------------------|--|
| 26. | Համբարյան Ժենյա          | Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի          |
| 27. | Թադևոսյան Սեդա           | Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի կենսաբանություն մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի                             |
| 28. | Վիրաբյան Ալլա            | Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականություն մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի |
| 29. | Հովհաննիսյան<br>Հռիփսիմե | Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի սոցիոլոգիա մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի                 |
| 30. | Սարգսյան Սվետլանա        | Ռազմական ամբիոնի նախնական զինվորական պատրաստություն մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի                         |

### ՕՐԱԿԱՐԳԻ ՆԱԽԱԳԻԾ

**1. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ընդհանուր բաժնի կանոնադրության հաստատման մասին (լրամշակված)**

Հաղ.՝ ընդհանուր բաժնի պետ Վ. Խաչատրյան

**2. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի կանոնադրության հաստատման մասին**

Հաղ.՝ գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն Թ. Խաչատրյան

**3. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի ծառայություններից օգտվելու կանոնների հաստատման մասին**

Հաղ.՝ գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն Թ. Խաչատրյան

**4. ՇՈՂ-ի նոր կրթական ծրագրերի (Հատուկ մանկավարժություն, Լոգոպետիա մասնագիտություններ ) լիցենզավորման փաթեթում ներառված ուսումնական պլանների հաստատման և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ներկայացնելու մասին**

Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի  
պրոռեկտոր-տնօրենի ՊԿ՝Ն. Ավետիսյան

**5. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի  
ուսանողների ուսումնառության ընդհատման, հեռացման (ազատման) և  
վերականգնման կանոնակարգի հաստատման մասին**

Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր- տնօրենի  
ՊԿ Ն. Ավետիսյան

**6. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի  
գիտական և գիտամեթոդական գործունեության համար ներքուհական դրամաշնորհի  
տրամադրման կարգի հաստատման մասին (լրամշակված)**

Հաղ.՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավար, կենտրոնի տնօրեն  
Ա. Սարգսյան

**7. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամում  
Գրագործության դեմ պայքարի քաղաքականության հաստատման մասին**

Հաղ.՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավար, կենտրոնի տնօրեն  
Ա. Սարգսյան

**8. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի  
պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական և գիտամեթոդական  
աշխատանքների խթանման ընթացակարգի հաստատման մասին (լրամշակված)**

Հաղ.՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավար, կենտրոնի տնօրեն  
Ա. Սարգսյան

**9. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի որակի  
ապահովման ու կառավարման հայեցակարգի հաստատման մասին**

Հաղ.՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավար, կենտրոնի տնօրեն  
Ա. Սարգսյան

**10. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի  
դասախոսի ծանրաբեռնվածության ձևավորման հիմնական նորմերի հաստատման  
մասին**

Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր - տնօրենի  
ՊԿ Ն. Ավետիսյան

**11 «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի  
գիտական քաղաքականության, որակի ապահովման ու կառավարման կենտրոնի  
կանոնադրության հաստատման մասին**

Հաղ.՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավար, կենտրոնի տնօրեն  
Ա. Սարգսյան

## 12. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

Գիտական խորհրդի նախագահ Եր. Մերոբյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

### ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

**Ա. Հովհաննիսյանն** արտահայտվեց, որ ինքը հասկանում է, որ տարեվերջ է և բուհի շահերից դուրս գալով պետք է փաստաթղթային հարցերը լուծել, սակայն օրակարգային տասնմեկ հարց քննարկել և այս բարդության հարցեր մեկ օրվա ընթացքում իր կարծիքով ծանր է և առաջարկեց, որ 10-րդ հարցը («Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի դասախոսի ծանրաբեռնվածության ձևավորման հիմնական նորմերի հաստատման մասին) հանել օրակարգից, քանի որ ինքն անձամբ ժամանակ չունենալու պատճառով ընդամենը մեկ ժամ առաջ է հասցրել աչքի անցկացնել փաստաթուղթը, որտեղ հուզող շատ կետեր է նկատել և առաջարկեց այն հունվարին բերել գիտական խորհրդի քննարկմանը, որպեսզի հնարավոր լինի ավելի լավ ծանոթանալ:

**Ն. Ավետիսյանը** համաձայնելով տիկին Հովհաննիսյանի հետ, ներկայացրեց, որ վերոնշյալ փաստաթղթի վրա աշխատել է համապատասխան հանձնաժողովը բավականին մեծ խմբով և կարելի է ասել, ամենաչարչարկված նորմն է, քանի որ դասախոսների կողմից առաջարկություններ են ներկայացվել, որոնք նորից քննարկվել են հանձնաժողովի կողմից: Տիկին Ավետիսյանը նշեց, որ փաստաթղթում կան կետեր, որոնց հետ անձամբ ինքն ևս մասնակիորեն համաձայն չէ, սակայն իր համաձայնության խնդիրը չէ և քանի որ այս փաստաթղթի հաստատումը հրատապ չէ՝ մինչև նոր դասաբաշխումը ժամանակ կա, իր կարծիքով, կարելի է նորից քննարկել, ապա անդրադառնալ հարցին հունվարին:

**Տիկին Հովհաննիսյանն** ասաց, որ ինքը շնորհակալություն է հայտնում հանձնաժողովի անդամներին նման աշխատանք կատարելու համար և միաժամանակ ներողություն խնդրում, որ ժամանակին դիտարկումներ չի հասցրել կատարել, սակայն ինքն արտահայտում է իր կարծիքը և գիտական խորհուրդը կարող է այն ընդունել կամ չընդունել:

**Եր. Մերոբյանի** կարծիքով մեկ անգամ այս հարցն արդեն էլեկտրոնային նամակի միջոցով քննարկման է դրվել ամռանը, եղել են առաջարկներ, հանձնաժողովի անդամների կողմից դրանք նայվել, նկատի են առնվել, ապա փաստաթուղթը նորից ուղարկվել է բուհի բոլոր ստորաբաժանումներին, որտեղից նորից կարծիքներ են եկել: Այս բոլոր գործընթացներով անցած և ձևավորված նոր փաստաթուղթը հինգ օր առաջ ուղարկվել է գիտական խորհրդի անդամներին և ինքը տեղյակ է, որ պարոն Մելքոնյանի հետ նորից հանդիպումներ են եղել նոր առաջարկների հետ կապված և դիմելով տիկին Հովհաննիսյանին պարոն Մերոբյանն ասաց, որ եթե այս ցիկլը անընդհատ պետք է կրկնվի, եթե գիտական խորհրդի նիստից մեկ ժամ առաջ պետք է ծանոթանալ նախորոք ուղարկված փաստաթղթի հետ, ապա այս պրակտիկան իրենց լավ բանի չի տանելու: Պարոն Մերոբյանը շարունակեց, որ եթե այս հարցը տարվի հունվարի գիտական խորհրդի օրակարգ, ապա ինքը համոզված է, որ վերջին պահին էլի առաջարկներ կլինեն ժամանակին փաստաթղթին չծանոթանալու պատճառաբանությամբ պայմանավորմամբ: Մերոբյանի կարծիքով հետագայում այս փաստաթղթերը աշխատանքի ընթացքում շտկման կարիք կունենան և իր կարծիքով քանի որ աշխատանքային պլանով նախատեսված են և հաստատված են ժամկետները, ապա պետք է պահպանել դրանք, այնուհետև պարոն Մերոբյանը առաջարկեց, եթե գլոբալ

հարցեր չկան, ապա գիտական խորհրդի անդամները նիստի ընթացքում կարող են քննարկել վիճելի կետերը:

**Գ. Աղանյանը** հավանության չարժանացրեց պարոն Սերոբյանի առաջարկը:

**Ա. Հովհաննիսյանն** առաջարկեց հարցը դնել քվեարկության:

**Ն. Ավետիսյանի** կարծիքով, քանի որ սա ամենակարևոր փաստաթուղթն է, առաջարկեց, որ գուցե իրենք պարոն Մելքոնյանին խնդրեն նորից ամբիոնի վարիչների հետ աշխատել:

**Պարոն Սերոբյանի** կարծիքով, արդեն յոթ ամիս աշխատում են այս փաստաթղթի շուրջ և իրենց աշխատելու կուլտուրան պետք է վերջապես ձևավորվի<sup>6</sup>:

**Ս. Սարգսյանի** կարծիքով պարոն Սերոբյանի դիտողությունները տեղին են, սակայն եթե գիտական խորհրդի անդամների կողմից կան առարկություններ, ապա կարելի է փաստաթղթի հաստատումը հետաձգել, քննարկել, ապա ներկայացնել հունվարին:

**Ա. Հովհաննիսյանը** վրդովված հայտարարեց, որ իր առաջարկությունը հանում է, ասելով, թե եթե հարց են բարձրացնում, ուրեմն մշակույթից զու՞րկ են:

**Շ. Տեր-Աղանյանը** նշեց, որ նորմում կան տեխնիկական բնույթի բացթողումներ, օրինակ 7-րդ էջում ամբիոնների անունները գրված են հին կառուցվածքին համապատասխան:

**Պարոն Սերոբյանը** նկատեց, որ սա հիմա ուղղվող է, քանի որ բովանդակային բնույթի փոփոխություն չէ:

**Պարոն Վ. Խաչատրյանն** առաջարկեց 10-րդ հարցը օրակարգից հանելու առաջարկը դնել քվեարկության:

**Պարոն Սերոբյանը** 10-րդ հարցը օրակարգից հանելու և հունվար ամսվա գիտական խորհրդի նիստի օրակարգում քննարկելու առաջարկը դրեց քվեարկության:

**ՈՐՈՇԵՑԻՆ**

10-րդ հարցը օրակարգից հանել և հունվար ամսվա գիտական խորհրդի նիստի օրակարգում քննարկել:

**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ**

23 անդամ. կողմ՝ 21, դեմ՝ 1 (Եր. Սերոբյան), ձեռնպահ՝ 2 (Ա. Հովհաննիսյան, Ա. Մկրտչյան):

Պարոն Սերոբյանը օրակարգը դրեց քվեարկության՝ 10-րդ հարցը հանված:

(Նիստին ուշացած անդամներ ավելացան):

**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ**

26 անդամ. կողմ՝ 26, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Պարոն Սերոբյանը նշեց, որ հարցն օրակարգից հանվում է, սակայն գիտական խորհրդի անդամներին հորդորեց, որ այն չդարձնել տակտիկա և իր կարծիքով, սա աշխատելու ձև ու ոճ չէ, երբ շուրջ յոթ ամիս քննարկված հարցը հանվում է գիտական խորհրդի նիստի օրակարգից:

## ՕՐԱԿԱՐԳ

1. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ընդհանուր բաժնի կանոնադրության հաստատման մասին (լրամշակված)

Հաղ.՝ ընդհանուր բաժնի պետ Վ. Խաչատրյան

**2. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի կանոնադրության հաստատման մասին**

Հաղ.՝ գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն Թ. Խաչատրյան

**3. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի ծառայություններից օգտվելու կանոնների հաստատման մասին**

Հաղ.՝ գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն Թ. Խաչատրյան

**4. ՇՊՀ-ի նոր կրթական ծրագրերի (Հատուկ մանկավարժություն, Լոգոպետիա մասնագիտություններ ) լիցենզավորման փաթեթում ներառված ուսումնական պլանների հաստատման և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ներկայացնելու մասին**

Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ՝ Ն. Ավետիսյան

**5. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ուսանողների ուսումնառության ընդհատման, հեռացման (ազատման) և վերականգնման կանոնակարգի հաստատման մասին**

Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր- տնօրենի ՊԿ Ն. Ավետիսյան

**6. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի գիտական և գիտամեթոդական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի տրամադրման կարգի հաստատման մասին (լրամշակված)**

Հաղ.՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավար, կենտրոնի տնօրեն Ա. Սարգսյան

**7. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամում Գրագողության դեմ պայքարի քաղաքականության հաստատման մասին**

Հաղ.՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավար, կենտրոնի տնօրեն Ա. Սարգսյան

**8. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների խթանման ընթացակարգի հաստատման մասին (լրամշակված)**

Հաղ.՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավար, կենտրոնի տնօրեն Ա. Սարգսյան

9. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի որակի ապահովման ու կառավարման հայեցակարգի հաստատման մասին

Հաղ.՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավար, կենտրոնի տնօրեն  
Ա. Սարգսյան

10. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի գիտական քաղաքականության, որակի ապահովման ու կառավարման կենտրոնի կանոնադրության հաստատման մասին

Հաղ.՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավար, կենտրոնի տնօրեն  
Ա. Սարգսյան

## 11. ԸՆԹԱՑԻՎ ՀԱՐՑԵՐ

11.1 ՇՊՀ-ի գիտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի շրջանակներում Հ. Դրմեյանի ղեկավարած խմբի կողմից 01-SCI-2018 «Ցուցադրական փորձերի և լաբորատոր աշխատանքների իրականացումը ֆիզիկայի դպրոցական դասընթացում» թեմայի իրականացման ընթացքում ներկայացված Ֆիզիկայի դպրոցական դասընթացի լաբորատոր աշխատանքների մեթոդական ուղեցույցի (Էլեկտրաստատիկա, Էլեկտրադինամիկա, Էլեկտրամագնիսականություն, օպտիկա և քվանտային ֆիզիկա) տպագրության երաշխավորելու մասին

Հաղ.՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավար, կենտրոնի տնօրեն  
Ա. Սարգսյան

### 1. ԼՍԵՑԻՆ՝

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ընդհանուր բաժնի կանոնադրության հաստատման մասին (լրամշակված)

Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ կանոնադրությունը 5 օր առաջ էլեկտրոնային նամակով ուղարկվել է գիտական խորհրդի անդամներին, նրանցից դիտարկումներ ու առաջարկներ չեն ստացվել սակայն եթե դրանք ժամանակի ընթացքում առաջացել են, ապա կարող են հարցեր ուղղել հաղորդման համար նիստին հրավիրված ընդհանուր բաժնի պետ Վ. Խաչատրյանին:

### ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ընդհանուր բաժնի կանոնադրությունը:

### ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

26 անդամ. կողմ՝ 26, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

### 2. ԼՍԵՑԻՆ՝

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և ՏՏ կենտրոնի կանոնադրության հաստատման մասին



**Թ. Խաչատրյանը** ներկայացրեց, որ իրենց կենտրոնի կողմից կազմված սույն փաստաթուղթը վերանայվել է համապատասխան հանձնաժողովի կողմից, կատարվել են շտկումներ, տրվել են եզրակացություններ, ապա ներկայացրել գիտական խորհուրդ՝ հաստատման նպատակով:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝**

**Ա. Մկրտչյանի** կարծիքով համաշխարհային պրակտիկայում նմանատիպ կենտրոնների ֆինանսավորումը կատարվում է 50 և 50 տարբերակով, այսինքն ֆինանսների 50 տոկոսը կենտրոնը ինքն է դրսից գտնում և հետաքրքրվեց, թե կանանադրության մեջ նման կետ մտցվա՞ծ է արդյոք:

**Թ. Խաչատրյանը** պատասխանեց, որ ամբողջ աշխարհում բուհերում դասավանդողները ևս իրենց ֆինանսական միջոցները ձեռք են բերում դրամաշնորհային ծրագրերի միջոցով և դիմելով պարոն Մկրտչյանին ասաց, որ իրենք ապրում ենք Հայաստանում:

**Ա. Մկրտչյանը** շարունակեց, որ այո՛, իրենք Հայաստանում են, դա հանգուցային հարց է, բայց եթե կենտրոնի հետ գործ ունեն, ապա այն պետք է ֆինանսավորվի դրսից:

**Պարոն Սերոբյանը** հարց ուղղեց պարոն Մկրտչյանին,- բոլո՞ր կենտրոնները պետք է պարտադիր դրսից ֆինանսավորվեն:

**Ա. Մկրտչյանը** արձագանքեց, որ ոչ բոլոր կենտրոնները, ուսումնական մասը որպես կենտրոն այլ խնդիր է լուծում և ֆինանսավորումը գոյանում է բուհի կրթական գործունեությունից:

**Գ. Նիկողոսյանը** դիմելով պարոն Մկրտչյանին ասաց, որ եթե հարցին նման տեսանկյունից են նայում, ապա խնդիրը պետք է տեղափոխել կառուցվածքային փոփոխության դաշտ:

**Ա. Մկրտչյանը** արձագանքեց, որ այո՛, ինչու ոչ:

**Պարոն Սերոբյանի** կարծիքով, այդ դեպքում պետք է հասնել բուհի կանոնադրության դաշտ, բայց հիմա իրենք եղած կանոնադրության և կառուցվածքի տիրույթում փորձում են կանոնադրություն ձևավորել:

**Գ. Նիկողոսյանի** կարծիքով, եթե գտնում են, որ փոփոխելը տեղին է, խնդիր կա, ապա պետք է դիմել հոգաբարձուների խորհրդին՝ փոփոխելու:

**Թ. Խաչատրյանը** դիմեց Ա. Մկրտչյանին, ասելով, որ եթե նա ունի իր կողմից նշված եվրոպական փորձը, խնդրում է գրավոր այն իրեն ներկայացնել, քանի որ, այսպես ասած, օդի մեջ ասածն իր համար հիմք չի կարող լինել:

**Ա. Մկրտչյանը** վրդովվեց և ասաց, որ ինքը օդի միջի մարդ չէ և Խաչատրյանը դրանով իրեն վիրավորում է:

**Պարոն Սերոբյանը** հանգիստ աշխատելու կոչ արեց և խոսքը ուղղեց Ա. Մկրտչյանին, որ այս պարագայում կառաջանան բուհի կանոնադրության և կառուցվածքի փոփոխության հարցեր:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝**

Հաստատել «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի կանոնադրությունը:

**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝**

25 անդամ. կողմ՝ 23, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2(Ա. Հովհաննիսյան, Շ. Տեր- Ադամյան):

Պարոն Սերոբյանը նշեց, որ ինքը խնդրում է, որ կարելի է տրադիցիա դարձնել այն աշխատատեղը, որ եթե մարդը դեմ է կամ ձեռնպահ որևէ հարցի շուրջ, ապա նախորոք ներկայացնի դրա պատճառը և դա ոչ թե հաշվետվություն է, այլ, միգուցե այնպիսի հիմնավոր պատճառ կներկայացվի, որ ինքը ևս լսելով այդ հիմնավորումը կփոխի իր դիրքորոշումը: Պարոն Սերոբյանը նշեց, որ իր առաջարկը կնպաստի քննարկվող և հաստատման ներկայացվող փաստաթուղթը ավելի որակյալ դարձնելուն և իր կարծիքով առաջարկն ընդունելի է:

Ա. Հովհաննիսյանի կարծիքով սխալ է, եթե մարդուն ասում են. «եթե դեմ ես, ապա բացատրիր, թե ինչու ես դեմ»:

Սերոբյանը նշեց, որ ինքը ոչ թե ասում է բացատրություն տալ, այլ մարդն արտահայտի իր պատճառը՝ հիմնավորված կամ հատուկ կարծիքը:

Ս. Սողոյանը շեշտեց, որ դա պետք է կատարվի նախքան քվեարկությունը, որի հետ համաձայնեց պարոն Սերոբյանը:

**3. ԼՍԵՑԻՆ՝**

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի ծառայություններից օգտվելու կանոնների հաստատման մասին

Պարոն Սերոբյանի հարցին, թե կա՞ն կանոնների հետ կապված առաջարկներ, Թ. Խաչատրյանը նշեց, որ այո՛, եղել են առաջարկներ, բայց դրանք զուտ խմբագրական բնույթի են և բովանդակային առումով փոփոխություններ չկան:

Պարոն Սերոբյանը նշեց, որ եղած առաջարկները հարկ է ներկայացնել գիտական խորհրդի անդամներին, որպեսզի իմանան, քանի որ իրենց կողմից հաստատվելու է այս փաստաթուղթը և մարդիկ պետք է իմանան հետո ինչ է փոխվելու:

Ս. Սարգսյանն առաջարկեց փաստաթուղթը ընդունել որպես հիմք, այնուհետև կատարել փոփոխությունները:

Պարոն Սերոբյանն առաջարկեց ընդունել և քվեարկել փաստաթուղթը՝ տեխնիկական բնույթի խմբագրումներով:

Թ. Խաչատրյանն ասաց, որ խմբագրումից հետո փաստաթուղթը կուղարկվի գիտական խորհրդի անդամներին:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝**

Հաստատել «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի ծառայություններից օգտվելու կանոնները:

**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝**

25 անդամ. կողմ՝ 23, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2(Ն. Ավետիսյան, Ա. Մկրտչյան ),

Ա. Մկոյանն ուշացած ներկայացավ նիստին:

**4. ԼՍԵՑԻՆ՝**

**ՇՊՀ-ի մագիստրոսի նոր կրթական ծրագրերի (Հատուկ մանկավարժություն, Լոգոպետիա մասնագիտություններ) լիցենզավորման փաթեթում ներառված ուսումնական պլանների հաստատման և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ներկայացնելու մասին**

Պարոն Սերոբյանը շնորհակալություն հայտնեց գիտական խորհրդի անդամներին նրանց կողմից էլեկտրոնային նամակի միջոցով «Կենսատեխնոլոգիա» մագիստրական կրթական ծրագրով նոր մասնագիտության լիցենզավորման փաթեթում ներառված ուսումնական պլանների հաստատմանը օպերատիվ արձագանքելու համար և հարցը ներկայացնելու համար խոսքը փոխանցեց տիկին Ավետիսյանին:

Տիկին Ավետիսյանը նշեց, որ իր շնորհակալությունն է հայտնում մանկավարժության ֆակուլտետի դեկանին և ամբիոնին, ապա շարունակեց, որ հատուկ նպատակադրված ուսումնասիրություն չի կատարվել, բայց ապագա մագիստրոսների կողմից բազմիցս հետաքրքրություն է ցուցաբերվել «Հատուկ մանկավարժություն», «Լոգոպետիա» մասնագիտությունների նկատմամբ: Տիկին Ավետիսյանը շարունակեց, որ առավել ևս պետության քաղաքականությամբ պայմանավորված, քանի որ գնում են համընդհանուր ներառականության, այդ համատեքստում վերոհիշյալ մասնագիտությունները խիստ արդիական են ու պահանջված: Այնուհետև տիկին Ավետիսյանը նշեց, որ գիտական խորհրդին ներկայացվել են «Հատուկ մանկավարժություն», «Լոգոպետիա» մասնագիտությունների լիցենզավորման փաթեթները, որոնցում առկա են բոլոր հիմքերը: Իր կարծիքով, սա այն քայլն է, որով ցույց է տրվում, որ իրենք արագ արձագանքում են աշխատաշուկայի պահանջներին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝**

**Ա. Հովհաննիսյանին** հետաքրքրում էր, թե քանի՞ արտաքին կարծիքներ կան այս հարցի հետ կապված:

Տիկին Ավետիսյանը պատասխանեց, որ ունեն 2 արտաքին կարծիքներ, որը զուտ բուհի պահանջն է եղել:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝**

Հաստատել նոր կրթական ծրագրերի (Հատուկ մանկավարժություն, Լոգոպետիա մասնագիտություններ) լիցենզավորման փաթեթում ներառված մագիստրական կրթական ծրագրով ուսումնական պլանները, լիցենզավորման փաթեթը ներկայացնել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եվ սպորտի նախարարություն:

Նիստին ներկայացավ նաև Կ. Դարբինյանը:

**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝**

28 անդամ. կողմ՝ 28, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

**5. ԼՍԵՑԻՆ՝ «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ուսանողների ուսումնասիրության ընդհատման, հեռացման (ազատման) և վերականգնման կանոնակարգի հաստատման մասին**

Տիկին Ավետիսյանը ներկայացրեց, որ այս կարգի հետ կապված 2 որոշում պետք է կայացվի, քանի որ օրենքի հավելվածը փոփոխության է ենթարկվել, փոփոխության է ենթակվել առանձին որոշումով և իրենք գիտական խորհրդով արդեն

որոշել են, որ գործած ճանաչել ԳՊՄԻ իրավահաջորդ ՇՊՀ-ի ուսանողների ուսումնառության ընդհատման, հեռացման (ազատման) և վերականգնման կանոնակարգը: Այնուհետև տիկին Ավետիսյանը շարունակեց, որ եզրույթների ճշգրտում է կատարվել օրենքի տառին և կարգին, հավելվածին համահունչ և անհրաժեշտություն կա, որ այս փաստաթուղթը ներքին գործառնության համար բուհում ունենան: Տիկին Ավետիսյանը ներկայացրեց, որ կանոնակարգի հետ կապված եղել են դիտարկումներ, որոնք քննարկվել են և ընթացքում էլ աշխատելիս կառաջանան լոկալ իրավիճակներ:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ**

**Ա. Սարգսյանը** նշեց, որ կանոնակարգում կետերը նշված են «տվյալ հաստատության» բառակապակցությամբ և առաջարկեց հստակեցնել դրանք, այսինքն գրվեն «ՇՊՀ»-ի:

**Թ. Խաչատրյանը** նկատեց, որ կանոնակարգում տառատեսակները ուղղման կարիք ունեն:

**Տիկին Ավետիսյանը** պատասխանեց, որ ինքը դրանք կրերի հստակ էսթետիկական տեսքի:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝**

Հաստատել «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ուսանողների ուսումնառության ընդհատման, հեռացման (ազատման) և վերականգնման կանոնակարգը:

**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝**

29 անդամ. կողմ՝ 29, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

**6. ԼՍԵՑԻՆ՝**

**«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի գիտական և գիտամեթոդական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի տրամադրման կարգի հաստատման մասին (լրամշակված)**

Ա. Սարգսյանը ներկայացրեց, որ հաստատված կարգի լրամշակման անհրաժեշտությունն առաջացել է գործառնության ընթացքում որոշակի խնդիրներով պայմանավորված, որոնք էլ փոփոխվել են, կատարվել են առաջարկություններ և հիմնական փոփոխությունը կատարվել է կապված արտաքին դրամաշնորհի շահած մասնակիցների հետ, այսինքն նախկին կարգով սահմանափակվում էր, որ արտաքին դրամաշնորհով աշխատող խումբը դրամաշնորհի ավարտից հետո միայն կարող էր մասնակցել ներբուհական դրամաշնորհների, իսկ այս կարգով այդ սահմանափակումը չկա:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ**

**Գ. Նիկողոսյանը** նկատեց, որ արդեն բուհի կողմից տրվել է դրամաշնորհի հայտարարությունը, ուղղակի պետք է նշել, որ մրցույթը կանոնակարգվելու է գործող կանոնակարգով, քանի որ հունվարի 1-ից ընդունվում է մինիմալ աշխատավարձի շեմի բարձրացումը և ստացվում է, որ իրենց աշխատավարձի դրույքաչափերը չեն ապահովում մինիմալ աշխատավարձի պահպանումը: Այնուհետև պարոն Նիկողոսյանը շարունակեց, որ ճիշտ է, սա հաստքային աշխատանք չի, սակայն ցանկալի է, որ գոնե մինիմալ աշխատավարձի շեմը պահպանվի, այսինքն հարկ է, որ տրամադրվող գումարի չափը խմբի անդամների համար մինիմալ աշխատավարձի չափով ապահովվել:

**Ա. Սարգսյանը** հստակեցրեց, որ նոր կարգով այս ամենը վերահաշվարկվել է:

Պարոն Սերոբյանը նշեց, որ այստեղ խնդիր է առաջանում, քանի որ հայտերի վերջնաժամկետը հունվարի 27-ն է:

**Գ. Նիկողոսյանի** դիտարկմամբ, ճիշտ է, հայտարարությունը տրված է, բայց քանի որ բուհի կողմից ազատական մոտեցում է դրսևորված, չեն խստացվել պահանջները, այս իմաստով ավելի լայն հնարավորություն է տրվել հայտ ներկայացնողներին:

**Պարոն Սերոբյանն** առաջարկեց, քանի որ մրցույթը կանոնակարգվելու է նոր կանոնակարգով, ուստի հայտերի վերջնաժամկետը 10 օր հետաձգել և հայտարարությունը կրկնել, որպեսզի բոլորի համար հավասար պայմաններ սահմանվեն՝

#### **ՈՐՈՇԵՑԻՆ՝**

Հաստատել «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի գիտական և գիտամեթոդական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի տրամադրման կարգը (լրամշակված)

#### **ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝**

29 անդամ. կողմ՝ 28, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1:

Պարոն Սերոբյանն առաջարկեց դրամաշնորհի հայտերի ընդունման վերջնաժամկետը երկարացնել 10 օրով և հարցը դրեց քվեարկության:

#### **ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝**

29 անդամ. կողմ՝ 28, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1:

Պարոն Սերոբյանը հանձնարարեց Ա. Սարգսյանին կազմակերպել ներբուհական դրամաշնորհի տրամադրման կարգի ժամկետների հետ կապված հայտարարության հարցը:

#### **7. ԼՍԵՑԻՆ՝**

**«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամում Գրագողության դեմ պայքարի քաղաքականության հաստատման մասին**

Ա. Սարգսյանը ներկայացրեց, որ հայեցակարգը նախնական փուլում՝ դիտարկումների արդյունքում բավականին վերափոխումների է ենթարկվել, վերանայվել է բուհում գործող երկու հանձնախմբերի կողմից, այնուհետև ներկայացվել է գիտական խորհրդին: Ա. Սարգսյանը նշեց նաև, որ գիտական խորհրդի անդամների կողմից առաջարկներ, դիտարկումներ չեն ստացվել:

Պարոն Սերոբյանը նշեց, որ ինքը սկզբունքային հարց ունի, սակայն դա ժամանակի հարց է, ավելի շատ ֆինանսական խնդիր է, բուհի միջոցները բավարարելու պարագայում արժի ունենալ գրագողության դեմ պայքարի (անտիպլագյատ) ծրագիր:

Ա. Սարգսյանը դիտարկում կատարեց, որ դրա համար պետք է ունենալ լիցենզիա, իրենց կենտրոնն ունի ներբեռնված նման ծրագիր, սակայն լիցենզիան այնուամենայնիվ անհրաժեշտ է:

Պարոն Սերոբյանը նշեց, որ ՀՀ-ի ոչ մի բուհ էլ դեռ նման լիցենզիա չունի:

Ա. Սարգսյանը նշեց, որ պատահական չէ, որ հայեցակարգի դրույթները քաղաքականության տեսքով են ներդրվում, որպեսզի փորձաքննության ընթացքում խնդիրները հասկանալի դառնան և դրույթները ընթացակարգային ընթացք ստանան:

Ա. Սարգսյանը նկատեց, որ նման առաջարկություն եղել է նաև պարոն Ներսիսյանի հանձնախմբին, որ դրույթներ կան, որոնք հետագայում կիրառության մեջ մտնելիս պետք է ստանան ընթացակարգային մշակում:

Պարոն Սերոբյանը վերոգրյալ հարցի հետ կապված առաջարկ կատարեց, որը կապված էր ուսումնամեթոդական կառավարման կենտրոնի հետ և դիմեց տիկին Ավետիսյանին, որ այս հայեցակարգից ելնելով նայվեն մագիստրոսական թեզերի ու քակալավրի ավարտական աշխատանքների հետ կապված գործառույթները, այսինքն հայեցակարգային կետեր կարող են լինել, որոնք գուցե արժե այնտեղ տեղայնացնել և կիրառել, այսինքն եթե անհրաժեշտ է, ապա հայեցակարգի հենքի վրա այնտեղ փոփոխություններ կատարվեն:

#### **ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝**

**Վ. Խաչատրյանի** կարծիքով ցանկալի է, որ քննակվող կարգում լինեն նաև արվեստի հետ առնչվող կետեր:

**Ս. Սարգսյանի** կարծիքով պարոն Խաչատրյանի առաջարկը ընդունելի է:

**Պարոն Սերոբյանը** հանձնարարեց արվեստի ամբիոնի վարիչի ԺՊ ՕՖ. Կուրազյանին և Վ. Խաչատրյանին, որպես այդ բնագավառի մասնագետներ, մշակել լրացուցիչ կետ արվեստի հետ կապված, որը վերանայվելուց հետո կներկայացվի գիտական խորհուրդ՝ հաստատման և այս հայեցակարգում ի լրացումն կարող է ընդունվել:

#### **ՈՐՈՇԵՑԻՆ՝**

Հաստատել «Շիրակի Ս. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամում Գրագողության դեմ պայքարի քաղաքականությունը:

#### **ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝**

30 անդամ. կողմ՝ 30, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

### **8. ԼՍԵՑԻՆ՝**

**«Շիրակի Ս. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների խթանման ընթացակարգի հաստատման մասին (լրամշակված)**

Ա.Սարգսյանը ներկայացրեց, որ ընթացակարգի հետ կապված դիտարկումներն ու առաջարկությունները՝ հավաքագրված ամբիոններից, ինքը ստացել է դեռևս նախորդ կենտրոնից, ուսումնասիրվել են դրանք, այնուհետև քննարկվել է պարոն Ս. Սարգսյանի ղեկավարած հանձնախմբի կողմից, որի արդյունքում որոշ կետեր փոփոխման են ենթարկվել: Փոփոխությունները պայմանավորված են նաև գործածության ժամանակ առաջացած խնդիրներով: Այնուհետև Ա. Սարգսյանը կանգ առավ այն կետերի վրա, որոնք փոփոխման են ենթարկվել, բացի այդ շեշտվեց, որ նախկին ընթացակարգը վերաբերվել է միայն բուհի ՊԴ կազմին, իսկ լրամշակվածը վերաբերվում է բոլոր աշխատակիցներին, որոնք գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքներ են կատարում:

Ա. Սարգսյանը ներկայացրեց, որ ամբիոնների առաջարկությունների հիման վրա փոփոխման է ենթարկվել պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների գիտական ֆակուլտետային խորհուրդների կամ Գիտությունների ազգային ակադեմիայի ինստիտուտների խորհուրդների կողմից թույլատրված գիտամեթոդական աշխատանքը՝ մեկ տպագիր մամուլի համար սահմանված գումարը, ինչպես նաև գիտական գյուտի հեղինակային վկայագրի հետ կապված գումարն է ավելացել: Մենագրությունների, ուսումնամեթոդական աշխատանքների, դասագրքերի, թեկնածուական, դոկտորական աշխատանքների

գրախոսումն է ավելացել՝ նախատեսվում՝ 5 000 ՀՀ դրամ և գիտական հոդվածների գրախոսման համար՝ 2 000 ՀՀ դրամ:

**Պարոն Սերոբյանն** ավելացրեց, որ օր-օրի անվճար գրախոսումները սահմանափակվում են և բոլոր բուհերն ու գիտական հիմնարկներն անցնում են գրախոսման համար որոշակի գումարի պահանջի:

Պարոն Սերոբյանի կարծիքով խրախուսման համար մեկ քայլ ևս կատարված է, եթե ԲՈԿ-ի ցուցակում ընդգրկված գիտական ամսագրերում և ժողովածուներում տպագրված հոդվածների համար նախատեսվում է 20 000 ՀՀ դրամ տրամադրել, ապա ՇՊՀ-ի գիտական տեղեկագրում տպագրվելու համար՝ 25 000 ՀՀ դրամ է նախատեսված, շեշտադրումը վերաբերում է նրան, որ սա կատարվել է նպատակադրված՝ շահագրգռելու գիտական գործունեությամբ զբաղվող աշխատակիցներին բուհի գիտական տեղեկագրում ավելի շատ հոդվածներ ներկայացնելու և տպագրվելու:

#### **ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝**

**Օֆ. Կուրազյանը** ներկայացրեց, որ ինքը վերջին երեք տարում երկու անգամ մասնակցել է միջազգային գիտաժողովների, իր անձնական միջոցներով, սակայն համալսարանն իրեն խրախուսելու փոխարեն աշխատանքի չներկայանալու համար աշխատավարձից զրկել է, այսինքն ստացվում է, որ ինքը կարծես, պատժվել է:

Պարոն Սերոբյանը հստակեցրեց, որ եթե աշխատակիցը սահման է հատում, ակնհայտ երևում է, որ նա աշխատանքի չի ներկայացել և ոչ մի վարչարար, եթե աշխատակիցը գործուղում չունի, իրավունք չունի նրան աշխատավարձ տալու, և ավելացրեց, որ սրանով ոչ ոք, ոչ ոքի չի պատժում:

**Ս. Սարգսյանը** դիմելով տիկին Կուրազյանին նշեց, որ եթե աշխատակիցը բացակայելու է, տվյալ դեպքում գիտաժողովի է մասնակցելու, ապա պետք է նախորոք զեկուցագիր ներկայացնի, որպեսզի առանց վճարման, բուհը գործուղում հատկացնի իր աշխատակցին:

**Ա. Մկրտչյանը** հավելեց, որ աշխատանքային օրենսգիրքով այս հարցը լուծված է. եթե աշխատակիցը գործուղում ունի, ապա վճարվում է:

**Ն. Ավետիսյանը** նկատեց, որ բուհում գործում է գործուղումների հետ կապված կարգ և դիմելով տիկին Կուրազյանին ասաց, որ նա կարող է իր կողմից առաջարկություններ ներկայացնել իրեն հուզող խնդիրների կապակցությամբ:

**Սերոբյանը** նշեց, որ, իրոք, պետք է հստակեցնել անհատական հրավերների հետ կապված հարցերը:

**Պարոն Ս. Սողոմյանը** հարց բարձրացրեց, որ ինքը առաջարկել է, որ գիտական հոդվածի համահեղինակները խրախուսվում են բուհի կողմից տրվող գումարը բաժանելով բոլոր համահեղինակների միջև, այնինչ ինքը գտնում է, որ պետք է բոլորին հավասար հիմունքներով խրախուսել՝ առանց գումարը բաժանելու, այլ առանձին-առանձին գումարը ամբողջական տրամադրել, ինչպես ընդունված է այլ երկրներում:

**Պարոն Սերոբյանը** հակադարձեց, որ բոլոր համահեղինակներն էլ տվյալ դեպքում հավասար աշխատանք են կատարում և իր կարծիքով սխալ է բոլորին հատկացված գումարը հավասար չափով չտրամադրելը:

**Պարոն Սողոյանի** կարծիքով եթե բուհից դուրս խրախուսումը կատարվում է այլ սկզբունքով, կարելի է այդ փորձն օգտագործել:

**Պարոն Սերոբյանի** կարծիքով ամեն բուհ խրախուսման իր որդեգրած սկզբունքն է կիրառում:

**Ս. Սարգսյանն** առաջարկեց խրախուսումը կատարել միայն համալսարանի հիմնական աշխատակիցներին, իսկ համատեղողներին՝ չխրախուսել:

**Պարոն Սերոբյանը** հակադարձեց, որ այս առաջարկը ֆինանսների խնայողություն է, սակայն ինքը համաձայն չէ, քանի որ համատեղողը, եթե հանդես է գալիս համալսարանի անունից, ապա նրա հոդվածները բուհի ցուցանիշներն են ավելացնում:

**Գ. Նիկողոսյանի** կարծիքով, շուտով Գիտության պետական կոմիտեյի կողմից բուհերը վարկանիշավորելիս հաշվի են առնելու նաև բուհի աշխատակիցների գիտական հոդվածների քանակը և այսուհետ ուշադրություն պետք է դարձնել, թե տվյալ հոդված գրողը ներկայացել է որպես ՇՊՀ-ի աշխատակից և եթե ներկայացել է, ուրեմն անկախ նրանից, թե համատեղող աշխատակից է, պետք է ստանա հավելավճար:

**Պարոն Սերոբյանը** հարց ուղղեց Ա. Սարգսյանին, թե հանձնաժողովում քննարկվել է պարոն Ս. Սարգսյանի առաջարկը:

**Ա. Սարգսյանը** ներկայացրեց, որ հանձնաժողովում քննարկվել է այս հարցը, սակայն իր կողմից ներկայացվել է, որ բուհերի վարկանիշավորման գործընթացում չի տարանջատվել հիմնական և համատեղող աշխատակիցների հարցը, ցուցանիշները երևում են որպես բուհի ամբողջական ցուցանիշ և հավատարմագրման գործընթացում էլ երևում են որպես բուհի ցուցանիշ:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝**

**Հաստատել «Շիրակի Ս. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների խթանման ընթացակարգը (լրամշակված):**

**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝**

30 անդամ. կողմ՝ 28, դեմ՝ 2, (Ա. Մկրտչյան, Ս, Սարգսյան), ձեռնպահ՝ 0:

**9. ԼՍԵՑԻՆ՝**

**«Շիրակի Ս. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի որակի ապահովման ու կառավարման հայեցակարգի հաստատման մասին**

Ա. Սարգսյանը ներկայացրեց, որ հայեցակարգը սկսել է մշակվել դեռևս երկու տարի առաջ, իրենց կողմից ուսումնասիրվել են այլ բուհերի փորձը, այդ փաստաթուղթը մշակվել է տարբեր ծրագրերի շրջանակներում, որտեղ որակի ապահովման կենտրոնը ևս մասնակցել է, նույնիսկ դրամաշնորհային ծրագրերով է մշակվել: Հիմնականում ԵՊՀ-ի կողմից կազմած և մշակված փաստաթղթով են այլ բուհերը առաջնորդվել, այդ թվում նաև ՇՊՀ-ն: Այնուհետև Ա. Սարգսյանը ներկայացրեց, որ իրենց կողմից կազմված փաստաթուղթը նախնական մշակումից հետո ուղարկվել է բուհի ստորաբաժանումներ, եղած կարծիքները ներկայացվել են համապատասխան հանձնաժողովներին, ապա ձևավորված հայեցակարգը ներկայացվել է գիտական խորհրդին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝**



**Ն. Ավետիսյանն** արտահայտվեց, որ ինքը ներողություն է խնդրում, որ չի հասցրել լրիվ կարգավ վերագրյալ փաստաթուղթը, սակայն 26-րդ էջում համալսարանի որակի ապահովման ներքին համակարգի կազմակերպական սխեմայի հետ կապված շատ հարցեր է տեսնում և իրեն՝ որպես որակի ապահովման գործընթացից ոչ շատ հեռու մարդու, անհանգստացնում է այն:

**Ա. Սարգսյանի** այն հարցին, թե ինչպիսի՞ խնդիրներ կան սխեմայում, տիկին Ավետիսյանը պատասխանեց, որ ինքը չի տեսնում կապերը իրենց կենտրոնի, ավագ դպրոցի, ամբիոնների միջև և առաջարկեց հնարավորություն տալ սխեման վերանայելու, քանի որ ինքը գտնում է, որ որակի ապահովման ներքին համակարգի խնդիրները հատվել են ստորակարգության խնդիրների հետ: Տիկին Ավետիսյանը շարունակեց, որ իր ցանկությունն է այս փաստաթուղթը կատարյալ տեսնելու, քանի որ այն թարգմանության է ենթարկվելու և իր կարծիքով հավատարմագրման գործընթացի մեխեթից մեկն է, ինքը որպես փորձագետ շատ խնդիրներ է տեսնում փաստաթղթում, ուստի նորից առաջարկում է, որ ժամանակ տրամադրվի Ա. Սարգսյանի հետ այն նորից քննարկելու, ինքն առաջարկում է քվեարկության դնել փաստաթուղթը, սակայն վերապահումով, որ սխեման նորից քննարկվի:

**Պարոն Մերոբյանը** հարց ուղղեց,- դրանք տեխնիկական հարցե՞՞ր են, տիկին Ավետիսյանը նշեց, որ միայն տեխնիկական չեն:

Պարոն Մերոբյանը նշեց, որ եթե փաստաթղթում կան սկզբունքային հարցեր, կարելի է նիստի ընթացքում քննարկել, հասկանալ հակասությունն ինչու՞մն է, քանի որ սխեմայի փոփոխությունը կրեթի նաև բովանդակային փոփոխության:

Տիկին Ավետիսյանը ավելացրեց, որ ինքը լավ գիտի, որ հարցի համար ժամանակ չկա:

Պարոն Մերոբյանը հարց ուղղեց տիկին Ավետիսյանին, թե կարող է գոնե երկու հակասություն նշել:

Տիկին Ավետիսյանը ներկայացրեց, որ ինքը սխեմայում չի տեսնում չորս կենտրոնների կապը որակի ապահովման կենտրոնի հետ, ինչպես է տարածվում որակի մշակույթը կենտրոնների հետ:

Պարոն Մերոբյանը պատասխանեց, որ սլաքներով դա ցույց է տված:

Ա. Սարգսյանը ներկայացրեց, որ կառուցվածքը բացահայտվում է 7-րդ գլխում:

Տիկին Ավետիսյանը շարունակեց, թե ինչպես է ապահովվում որակի ապահովման ներքին համակարգը իրենց կենտրոնի հետ, ներողություն խնդրելով ու նշելով, որ ինքն այդ հարցը ավելի շուտ պետք է տար, սակայն իրեն ոչ մեկը պարապության մեջ չի մեղադրի:

Ա. Սարգսյանը պատասխանեց, որ որակի ապահովման ներքին համակարգը ընդհանրապես բուհում ընթացող բոլոր գործընթացներն են, որոնք որ միտված են որակին, այդ ուղղությամբ կառուցվածքից պետք է միանշանակ բխի և փաստաթղթի 7-րդ գլխում հստակ բերված է, թե բաժինը որակին ուղղված ինչ գործընթացներ պետք է կատարի, որակին ուղղված գործառույթները բխում են տվյալ ստորբաժանման կանոնադրությունից, սրանք վերցված են նախկին կանոնադրության գործառույթներից: Այնուհետև Ա. Սարգսյանը շարունակեց, որ այս ամենը ապահովում է կրթական ծրագրերի մշակման և արդյունավետ իրականացման ընթացակարգեր և վերամշակման և մշտադիտարկման մեխանիզմներ:

Տիկին Ավետիսյանը նորից հարց ուղղեց, թե ինչպես է փոխադարձ իրականացվում այդ կապը որակի ապահովման և ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի միջև:

**Ա. Սարգսյանը** պատասխանեց, որ իրենք հետազոտություններ են իրականացնում և հետազոտության արդյունքները ներկայացնում են:

Տիկին Ավետիսյանը ընդհատեց, որ հետազոտություններից իրենք տեղյակ չեն:

Ա. Սարգսյանը պատասխանեց, թե ինչպես կարող է տեղյակ չլինեն, եթե դրանք կայքում լուսաբանվում են, հարցաթերթիկները նույնիսկ տեղադրված են կայքում, հստակ նշված են հետազոտության ժամկետները: Դրանց արդյունքները ներկայացվել են նախորդ տարվանը ռեկտորի հաշվետվության մեջ գետեղելու համար, այս տարվանը իրենց կողմից ներկայացվելու է գիտական խորհրդի դիտարկմանը և ուղարկվել է նաև և ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնին:

**Տիկին Ավետիսյանը** ներկայացրեց, որ այդ հարցումները ստորակարգությունը, հակադարձ կապը, ահազանգումը, ազդարարումը և միմյանց հետ համահունչ գործողությունների կապը ինքը անկեղծ ասած չի տեսնում, մինչև այսօր չի նկատել և իր հարցը դրա համար էլ պատահական չէր, այնուհետև շարունակեց, որ այդ երկու կառույցների միջև կապը փոխադարձ սլաքները ենթադրում են, որ գործառնություններ կանոնակարգված պետք էլինի, դրա համար էլ նախորդ կառուցվածքը ճիշտ էր և պետք էր օգտվել դրանից:

**Ա. Սարգսյանի** կարծիքով տիկին Ավետիսյանի նշածները իրենց կողմից նկատի առնված են փաստաթղթում:

**Պարոն Սերոբյանը** նշեց, որ երկկողմանի սլաքները տիկին Ավետիսյանի առաջ քաշած հարցերի պատասխանը տալիս է և ավելացրեց, որ ուրիշ բան է, կիրառման մեխանիզմները ինչքանով են համապատասխանում երկկողմանի սլաքներին:

**Պարոն Մելքոնյանն** առաջարկեց փաստաթղթում «Որակի համակարգող» բառակապակցության փոխարեն խմբագրել «Որակի ապահովման համակարգող», որի հետ համաձայնեցին գիտական խորհրդի անդամները:

Պարոն Սերոբյանն առաջարկեց քվեարկության դնել փաստաթղթի հաստատման հարցը, հանձնարարելով Ն. Ավետիսյանին մինչև 08.01.2020թ.- առաջարկություններ ներկայացնել առաջ քաշված խնդիրների հետ կապված, դրանք քննարկել Ա. Սարգսյանի հետ և եթե կլինեն էական տարբերություններ, ապա գիտական խորհրդի անդամների հետ էլեկտրոնային նամակի միջոցով քննարկում կկազմակերպվի և անհրաժեշտության դեպքում փաստաթղթում մասնակի շտկումներ կիրականացվեն:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝**

Հաստատել «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի որակի ապահովման ու կառավարման հայեցակարգը:

**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝**

28 անդամ. կողմ՝ 28, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

**10. ԼՍԵՑԻՆ՝**

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի գիտական քաղաքականության, որակի ապահովման ու կառավարման կենտրոնի կանոնադրության հաստատման մասին

Պարոն Սերոբյանը ներկայացնելով, որ կանոնադրությունը նախորոք ուղարկվել էր գիտական խորհրդի անդամներին՝ նշեց, որ 3.10-րդ կետում ինքը դիտարկում ունի,

որակի կենտրոնի խնդիրների մեջ համալսարանում որակի մշակույթի տարածման ու բարելավման խթանումը, և գտնում է, որ որակի կենտրոնը ոչ միայն պետք է խթանի, այլ տարածի ու բարելավի և առաջարկեց գրել տարածմանն ու բարելավմանը:

Պարոն Սերոբյանը առաջարկեց հաստատել կանոնադրությունը՝ ուղղումներով և հարցը դրեց քվեարկության:

#### **ՈՐՈՇԵՑԻՆ՝**

Հաստատել «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի գիտական քաղաքականության, որակի ապահովման ու կառավարման կենտրոնի կանոնադրությունը:

#### **ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝**

28 անդամ. կողմ՝ 28, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

#### **ԸՆԹԱՑԻՎ ՀԱՐՑԵՐ**

##### **11.1 ԼՍԵՑԻՆ՝**

ՇՊՀ-ի գիտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի շրջանակներում Հ. Դրմեյանի ղեկավարած խմբի կողմից 01-SCI-2018 «Ցուցադրական փորձերի և լաբորատոր աշխատանքների իրականացումը ֆիզիկայի դպրոցական դասընթացում» թեմայի իրականացման ընթացքում ներկայացված Ֆիզիկայի դպրոցական դասընթացի լաբորատոր աշխատանքների մեթոդական ուղեցույցի (Էլեկտրաստատիկա, Էլեկտրադինամիկա, Էլեկտրամագնիսականություն, օպտիկա և քվանտային ֆիզիկա) տպագրության երաշխավորելու հարց:

Ա. Սարգսյանը ներկայացրեց, որ ներբուհական դրամաշնորհի շրջանակներում Հ. Դրմեյանի ղեկավարած խմբի կողմից ներկայացված Ֆիզիկայի դպրոցական դասընթացի լաբորատոր աշխատանքների մեթոդական ուղեցույցի հետ կապված ունեն արտաքին դրական կարծիքներ ՎՊՀ-ի և ԳՊՀ-ի ֆիզիկայի ամբիոններից:

#### **ՈՐՈՇԵՑԻՆ՝**

ՇՊՀ-ի գիտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի շրջանակներում Հ. Դրմեյանի ղեկավարած խմբի կողմից 01-SCI-2018 «Ցուցադրական փորձերի և լաբորատոր աշխատանքների իրականացումը ֆիզիկայի դպրոցական դասընթացում» թեմայի իրականացման ընթացքում ներկայացված Ֆիզիկայի դպրոցական դասընթացի լաբորատոր աշխատանքների մեթոդական ուղեցույցը (Էլեկտրաստատիկա, Էլեկտրադինամիկա, Էլեկտրամագնիսականություն, օպտիկա և քվանտային ֆիզիկա) երաշխավորել տպագրության:

#### **ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝**

28 անդամ. կողմ՝ 28, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

1. Գիտական խորհրդի նախագահ, ռեկտորի ԺՊ
2. Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ
3. ՇՊՀ պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավար
4. Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն
5. Գիտական քաղաքականության, որակի ապահովման ու կառավարման կենտրոնի տնօրեն
6. Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն
7. Գիտական քարտուղար (գիտական խորհրդի քարտուղար)
8. Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի ղեկան
9. Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի ղեկան
10. Սոցիալական գիտությունների և իրավունքի
11. Մանկավարժության ֆակուլտետի ղեկան
12. Ռազմական ամբիոնի պետ
13. ՇՊՀ քոլեջի տնօրեն
14. ՇՊՀ ավագ դպրոցի տնօրեն
15. ՇՊՀ արհմիության նախագահ
16. Մ.գ.դ, պրոֆեսոր, (ամենաերիտասարդ ղոկտոր)

Սերոբյան Երվանդ

Ավետիսյան Նազելի

Նիկողոսյան Գագիկ

Մելքոնյան Հովիկ

Մարգարյան Արմենուհի

Խաչատրյան Թերեզա

Պետրոսյան Կարինե

Պողոսյան Բագրատ

Մելիքյան Թամարա

Հովհաննիսյան Օֆելյա

Մարդոյան Ռուզաննա

Մկրտչյան Արթուր

Այվազյան Կարինե

Դարբինյան Կարեն

Խաչատրյան Վալերի

Սողոյան Սպարտակ

17. Մ.գ.դ, պրոֆեսոր, (ամենատարեց դոկտոր)
18. ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր
19. Աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնի վարիչ, աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ
20. Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի զործարարության և վարչարարության ամբիոնի վարիչի ԺՊ, տնտ.գ.թ., դոցենտ
21. Մանկավարժության ֆակուլտետի մանկավարժության ամբիոնի վարիչի ԺՊ, մ.գ.թ., դոցենտ
22. Մանկավարժության ֆակուլտետի ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոնի վարիչի ԺՊ, մ.գ.թ., դոցենտ
23. Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի պատմության և փիլիսոփայության ամբիոնի վարիչի ԺՊ, պ.գ.թ., դոցենտ
24. Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի իրավագիտության և քաղաքագիտության ամբիոնի վարիչի ԺՊ, պ.գ.թ., դոցենտ
25. Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի հոգեբանության ամբիոնի վարիչի ԺՊ, հոգ.գ.թ., դոցենտ
26. Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի անզլերեն լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր



Մկոյան Արտաշես



Սարգսյան Սամվել



Մարտիրոսյան Լևոն



Մկրտչյան Արթուր



Ղուկասյան Լուսիկ



Ադանյան Գևորգ

Խորիկյան Հովհաննես



Հովհաննիսյան Արտակ


Սահակյան Կարինե





Հովհաննիսյան Անահիտ


27. Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ, բան. գիտ. դոկտոր
28. Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի արվեստի ամբիոնի վարիչի ԺՊ, բ.գ.թ., ասիստենտ
29. Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի միջմշակութային հաղորդակցության և զբոսաշրջության ամբիոնի վարիչի ԺՊ, բ.գ.թ., ասիստենտ
30. Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի ԺՊ, բ.գ.թ., դոցենտ
31. Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի
32. Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի մաթեմատիկա մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի
33. Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի կենսաբանություն մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի
34. Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականություն մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի
35. Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի թարգմանչական գործ անգլերեն և ռուսերեն մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի

 Հայրապետյան Սերգո


 Կուրազյան Օֆելյա


 Տեր-Աղամյան Շուշան


 Մաթևոսյան Էվելինա






 Համբարյան Ժենյա

Հովհաննիսյան Յուլյանա

 Թադևոսյան Սեդա

 Վիրաբյան Ալլա

 Ամիրխանյան Անուշ

36. Մանկավարժության ֆակուլտետի տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի  Քոչարյան Անահիտ
37. Մանկավարժության ֆակուլտետի ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ մասնագիտության 2-րդ կուրսի ուսանող  Խաչատրյան Կարեն
38. Մոցիլակյան գիտությունների և իրավունքի ֆակուլտետի պատմության մասնագիտության մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող  Աթոյան Արտյոմ
39. Մոցիլակյան գիտությունների և իրավունքի ֆակուլտետի սոցիոլոգիա մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի  Հովհաննիսյան Հռիփսիմե
40. Ռազմական ամբիոնի նախնական զինվորական պատրաստություն մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի  Մարգարյան Սվետլանա